

ՄԵԿ ԸՆՏԱՆԻՔ ՈՒ ՄԵԿ ԾԱԿԱՏԱԳԻՐ

Լիբանանեան յարանաւանութիւններուն ղեկավարներն ու ներկայացուցիչները տիրոջներուն համայնքային կեդրոնին մէջ գումարեցին զագաթաժողով մը, որուն ընթացքին քննարկեցին վտանգաւոր զարգացումները եւ միացեալ յայտարարութեամբ մը շեշտեցին, որ լիբանանցիները մաս կը կազմեն մէկ ընտանիքի եւ անոնց կը միատրո՛ք մոյն ճակատագիրը, յամբձմառութիւն յայտնելով պետութեան հովանիին տակ երկրի պաշտպանութեան: Ժողովակազմները զգուշացուցին ներքին կայունութիւնը ցնցելու արարքներէն, բարեկամ երկիրներէն պահանջելով անյապաղ օգնել Լիբանանին:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՄԷՋ

Միացեալ Նահանգներու Արտաքին գործերու նախարարութեան մէջ երէկ տեղի ունեցաւ լիբանանեան-իսրայէլեան բանակցային հերթական նիստը՝ միջնորդութեամբ ամերիկեան կողմին: Ուաշինկթըն յայտարարեց, թէ Լիբանան ու Իսրայէլ դրականօրէն կ'ընթանան համաձայնութեան մը ուղղութեամբ, որ կ'երաշխարհէր Լիբանանի գերիշխանութիւնը եւ Իսրայէլի անվտանգութիւնը: Բանակցութիւններուն եւ քաղաքական խորհրդակցութիւններուն զուգահեռ,



իսրայէլեան ուժերը անցնող երկու օրերուն շարունակեցին թիրախաւորումներու շարքը, կեդրոնանալով մասնաւոր Նապաթիի շրջանին վրայ: Լիբանանեան բանակը յայտարարեց, թէ անօդային սարքի հարուածով զինուոր Օմար Խըտըր զոհուած է Նապաթի-Զֆարըզպիթ ճամբուն վրայ, իսկ Տէյր Չահրանիի մէջ վիրաւորուած են սպայ մը եւ զինուոր մը: Լիբանանեան համալսարանը գուժեց իր ուսանողներէն երկուքին մահը, մերձակայ խարտալի շրջանի



թիրախաւորումին պատճառով: Առողջապահութեան նախարարութիւնն ալ յայտարարեց, թէ երկու փրկարար զոհուած է Շուրի մէջ: Երէկ առաւօտեան, ինքնաշարժ մը թիրախաւորուեցաւ հալոտի մայրուղիին վրայ: Պէյրութի հարաւային արուարձաններուն եւ հարաւային բազմաթիւ շրջաններու իրավիճակը խիստ լարուած էր նախանցեալ օր, երբ իսրայէլեան բանակը հրապարակեց տեղահանութեան հրահանգներ եւ յայտարարեց Յըզպալլայի կեդրոններն ու զինամթերանցները կործանելու մասին:

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ԱՐԱԲԱԿԱՆ ԿԱՐԾՐ ԿԵՅՈՒԱԾՔԻ ԿՈՉ

Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամի յայտնեց Իրանի հետ բանակցութիւններուն շարունակութիւնը, ժխտելով շփումներու դադարեցումին մասին տարածուած տեղեկութիւնները: Զուլթի Արտաքին գործերու նախարարութիւնը երէկ իր մօտ կանչեց Իրանի դեսպանը, դատապարտեց շրջանի երկիրներուն դէմ իրանեան յարձակումները ու տեղեկացուց իրանցի երկու դիւանագետ վտարելու մասին: Զուլթի յայտարարեց, թէ Իրանէն արձակուած հրթիռներն ու անօդային սարքերը պատճառած



են շուրջ 63 վիրաւոր: Արաբական Միացեալ Էմիրութիւններու նախագահի խորհրդական Անուար Կարկաշ կը ուղղեց արաբական կարծի կեցուածք որդեգրելու, «որովհետեւ բոլորս կը վճարենք Իրանի ընդարձակուող նկրտումներուն գինը»: Ամերիկեան բանակին կեդրոնական հրամանատարութիւնը յայտարարեց Տոնի ջուրերուն մէջ Իրանի հրամանատարական կետ մը կործանելու մասին, խափանելով շրջանային թիրախներու ուղղութեամբ իրանեան յարձակումներու գործադրութիւնը: Իրանի յեղափոխական պահակազունը միւս կողմէ յայտարարեց ամերիկեան 5-րդ նւաւատորմին կեդրոնն ու օդային խարիսխ մը հարուածելու մասին:

ՓԱՇԻՆԵԱՆ «ՄԵՆՔ ԱԶԱՏԱԳՐԵՑԻՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան վերահաստատեց, որ ծրագիր չկայ երեք հարիւր հազար ատրպէյճանցի բնակեցնելու Հայաստանի մէջ, ինչպէս կը պնդէ ընդդիմութիւնը: Գեղարքունիքի Ծովակ գիւղին մէջ ընտրական հաւաքի մը ընթացքին վարչապետը յիշեցուց, որ Նոյն ընդդիմութիւնը 2021-ի ընտրութեանն առաջ կը պնդէր, որ ատրպէյճանցիները պիտի հասնին Սեւանի ափ, եթէ ընտրութիւններուն յաղթէ վարչապետին քաղաքական ուժը:



Փաշինեան միաժամանակ շեշտեց, որ ատրպէյճանցիներու ժամանումին բացառումով կը փակուի Նաեւ հայերու Ատրպէյճան (Արցախ) վերադարձի նիւթը: «Ամենէն կարելորդ այն է, որ Հայաստան դուրս եկած է յարատեւ հակամարտութեան թակարդէն: Մենք ճիշդ քայլ առիւնք չէնք ընդունելու զարաքաղեան շարժումը եւ անոր շնորհիւ այսօր ունինք աւելի անկայն եւ պաշտպանուած պետութիւն, աւելի բարեկեցիկ կեանք քան երբէն», ըսաւ Փաշինեան: Ան շեշտեց, որ զարաքաղեան շարժումին շարունակութիւնը պիտի առաջնորդէր յաւելեալ զոհերու եւ ի վերջոյ՝ պետականութեան կորուստի: «Մենք ազատագրած ենք Հայաստանի Հանրապետութիւնը», ըսաւ Փաշինեան՝ աւելցնելով, որ կարելի չէ հակամարտութիւնը փոխանցել յաջորդ սերունդներուն:

Նախօրէին տեղի ունեցած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի հեռախօսակցոյցը, որուն ընթացքին վարչապետ Փաշինեան շնորհատրած է Նախագահ Էրտողանը Ղուրպան Պայրամի տունին առիթով: Զննարկուած են Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ երկկողմ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը եւ տարածաշրջանային հարցեր: Անդրադարձ եղած է Թուրքիա-Հայաստան ուղիղ առեւտուրի ընթացակարգերը սահմանելու որոշումին եւ Ախալքալաք-Կարս երկաթուղիի բացումին Հայաստանէն արտահանումներ եւ Հայաստան ներմուծումներ իրականացնելու համար: Էրտողան յայտնած է, որ Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ կարգաւորումը կը շարունակուի՝ ուղիղ առեւտուրի մեկնարկի ուղղութեամբ քայլերով: Ան ընդգծած է, որ Թուրքիան կը ձգտի տարածաշրջանին մէջ խաղաղութեան ու կայունութեան եւ միշտ կ'աջակցի այդ ուղղութեամբ ձեռնարկուող քայլերուն:

ԶԱՅՆԵՐ ԹԱԻՐԻԶԷՆ (Վարպատական պատերազմի ստուերին տակ...)

Մարտ ամսու առաջին օրէն սկսեալ մինչեւ Ապրիլի կէտերը Իրանի քաղաքներն ու իրանցիք դարձեալ ապրեցան պատերազմի անդուհանգը: Երբայական պետութիւնն ու իր գերիզօր պաշտպանը՝ Միացեալ Նահանգներ, օդային հրթիռակոծումներ շղթայագրեծեցին իրանեան այլազան տարածքներու վրայ, ալեկոծելով Արաբական Տոնի քարիւղաշատ աւազանը...: Ու մինչ ամբողջ աշխարհի շունչը բռնած ժամ առ ժամ կը հետեւէր պատերազմական թէժ իրադարձութեանց, եւ մտքով կը թռչէի դէպի Թեհրան, դէպի Նոր Ջուղա կամ դէպի Թաւրիզ...: Ի՞նչ կ'ընէին մեր հայ հայրենակիցները այնտեղ, ինչպէ՞ս կը պաշտպանէին իրենք զիրենք, նիւթական կամ մարդկային զոհեր կ'ունենային արդեօք...: Կը սպասէի, որ Թաւրիզէն հասնէր տեղույն «Արտազ» ամսագրին նոր թիւը, որպէսզի ճշգրիտ տեղեկութիւններ քաղէի հոնկէ, վերահասու ըլլայի կացութեան:

(Շարունակութիւնը տեսնել էջ 2)

ՃԵՊԱԶՐՈՅՑ ԸՆԿԵՐ ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆԻ ՀԵՏ

Հայաստանի մէջ կայանալիք խորհրդարանական ընտրութիւններէն մեզ կը բաժնէ ընդամենը քանի մը օր: Քաղաքական մթնոլորտը արդէն իսկ թեւակոխած է նախընտրական պայքարի թէժ փուլը, ուր տարբեր քաղաքական ուժեր կը փորձեն իրենց դիրքորոշումները ներկայացնել հանրութեան եւ շահիլ ընտրողներու վստահութիւնը: Սակայն երբեմն գաղափարական մրցակցութիւնը իր տեղը կը զիջի փոխադարձ մեղադրանքներու, քարոզչական սրացումներու եւ հանրային տրամադրութիւններու վրայ ազդեցութիւն գործելու բազմաժանտակ փորձերու:

Այս առիթով, «Արարատ» կարծ գրոյց մը ունեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Աւստրալիոյ շրջանի Վարիչ մարմինի ատենապետ, Լիբանանի խորհրդարանի նախկին երեսփոխան եւ ՄԴՀԿ Լիբանանի շրջանի նախկին ատենապետ ընկեր Սեպուհ Գալփաքեանի հետ:

(Ա.)



Հ. 7 Յունիսին կայանալիք Հայաստանի խորհրդարանական ընտրութիւնները ի՞նչ նշանակութիւն ունին Հայաստանի քաղաքական ապագային համար:

Պ. - Անկասկած, 2026-ի խորհրդարանական ընտրութիւնները վճռորոշ եւ ճակատագրական նշանակութիւն ունին Հայաստանի ապագային համար: Ասոնք պարզապէս խորհրդարանական ընտրութիւններ չեն, այլ որոշ իմաստով հակաքուէ մը (referendum)՝ Հայաստանի արտաքին քաղաքականութեան եւ աշխարհաքաղաքական ապագայի ուղղութիւնը վերջնականապէս ճշդելու առումով: Եթէ ուշադիր հետեւինք ընտրապայքարին մասնակցող հիմնական ուժերուն, որոնցմէ մէկը իշխանական է, իսկ երեքը՝ ընդդիմադիր, յստակ պատկեր մը կը ձեւաւորուի: Իշխանութիւնը իր քաղաքական հայեցողք ուղղած է դէպի Արեւմուտք՝ միաժամանակ փորձելով պահպանել հուսալքութեամբ յարաբերութիւններ բոլոր կողմերուն հետ՝ ներառեալ Ռուսիան: Մինչդէռ ընդդիմութիւնը իր ամբողջ քաղաքական շեշտադրումը դրած է Ռուսիոյ վրայ եւ միայն Ռուսիոյ: Գետնաբար, 7 Յունիսին կայանալիք ընտրութիւնները մեծապէս այս երկու աշխարհաքաղաքական ուղղութիւններու բախումն ու մրցակցութիւնն են:

Հ. Նախընտրական փուլին հետեւելով ի՞նչ վերապահութիւններ ունիք, որոնք կրնաք ամփոփ կերպով ներկայացնել:

Պ. - 2026-ի ընտրութիւններուն ընթացքն ու ընտրաշափն տիրող գերլարուած մթնոլորտը այնքան բարդ են, որ դժուար է կարծ պատասխաններով ամբողջական գնահատական տալ: Այնուամենայնիւ, փորձեմ կեդրոնանալ քանի մը կարելի կետերու վրայ: 2018-ի Թաւրիզի յեղափոխութեան ամենակարեւոր ձեռքբերումներէն մէկը իսկական ժողովրդավարութեան հաստատումն էր: Անցնող ընտրութիւններուն ընթացքին, ի տարբերութիւն 2018-էն առաջ տեղի ունեցած ընտրութիւններուն, ակնյայտ էր ընտրակաշառքի գրեթէ լիակատար բացակայութիւնը եւ ընտրական գործընթացներու թափանցիկութիւնը: Ասիկա ժողովրդավարական զարգացման ուղղութեամբ լուրջ յառաջընթաց էր եւ արժանի՝ բարձր գնահատանքի:

Այս ընտրութիւններուն, սակայն, տպաւորութիւն կը ստեղծուի, թէ որոշ շրջանակներ կը փորձեն վերակենդանացնել ընտրակաշառքի նախկին արատաւոր սովորութիւնը, ինչ որ մտահոգիչ էրեւոյթ է: Երկրորդ լուրջ մտահոգութիւնը արտաքին միջամտութիւններուն կը վերաբերի: Եթէ նախորդ ընտրութիւններուն արտաքին ճնշումները, մասնաւորաբար ռուսական ազդեցութիւնը, մեծապէս չէզոքացուած էին, ապա այս անգամ արտաքին դերակատարութիւնը աւելի տեսանելի է 2024-փետիլ է: Այսպիսի բացասական երեւոյթներ կրնան ստուեր ձգել ընտրական գործընթացին վրայ եւ, հակառակ ակնկալութիւններուն, Նոյնիսկ հակադարձ ազդեցութիւն ունենալ՝ ժողովրդային դժգոհութիւն եւ զայրոյթ յառաջացնելով:

Հ. Հետաքրքրական պիտի ըլլայ յսել ընտրութիւններու արդիւնքներուն ձեր կանխատեսումները:

Պ. - Այս ընտրութիւններուն հիմնական մրցակցութիւնը, ըստ էութեան, կը ծաւալի չորս կամ հինգ քաղաքական ուժերու միջեւ: Առանց թերազնահատելու մնացեալ մասնակից կուսակցութիւններուն դերակատարութիւնը, տարբեր հարցախոյզերու համաձայն, իշխող կուսակցութիւնը տակաւին կը պահպանէ ամենաբարձր վարկանիշը: Միւս երեք հիմնական ուժերուն համար, սակայն, խորհրդարանին մէջ

Շարունակութիւնը տեսնել էջ 2

Հայաստանը Ո՞ր Խաչմերուկներում Վրայ Է

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԵՏՔ Ի՞ՆՉ ՊԱՏԿԵՐ ԿՐՆԱՅ ԶԵՒԱԽՈՐՈՒԻ

ՊԱՐՈՅՐ 3. ԱՐՊԱՇԵԱՆ

Գաղտնիք պարզած չենք ըլլար, եթե բացայայտենք կամ բարձրաձայնենք, որ Հայաստան աշխարհը թեևակոխած է խիստ վտանգալոր շրջագիծի մը մեջ, որ կրնայ անելի աղիտաբեր ցնցումներու ենթարկուիլ:

Չարմանալին եւ այսպէսլին այն է, որ անկումային զարգացումները անզուսպօրէն կը շարունակուին, կարծես թէ Հայաստանը դատապարտուած է մալու կազմալոյծ ու հաշմանդամ, իսկ այդ հիւանդկախ վիճակը ոչ ոք չի տեսներ կամ, զգալու պարագային իսկ, անտարբերութիւնը կը պատէ ամբողջ շրջապատը:



Ո՛չ տարերային երկրաշարժը, ոչ ալ Արցախեան պատերազմներու ճակատագրերը սման անփոյթ ու ասնծարձակ, անուղղայ ու խառնափնթոր սուր բռնկումներ ստեղծած են, որովհետեւ ժողովուրդը գիտակից ու զգաստ էր, թէ ինչպէս պիտի վերաբերուէր այդ բարդ տագնապներուն հետ, հետեւաբար չկար խուճապային եւ անձնատուութեան դաժման մթնոլորտ, դիմագրաւելու զանոց բացառիկ զգուշութեամբ, աչալրջութեամբ, իրատեսութեամբ, վճռակամութեամբ ու մտացիութեամբ:

Նոյն օրինակապահութիւնը կը տիրէր նաեւ անկախութեան հռչակումի նախօրեակին, նաեւ՝ ընթացքին, որովհետեւ ժողովուրդը կը հաւատար անոր իրաւականութեան ու զայն պահելու եւ յաջողցնելու կարելիութեան, համախումբ ու միասնական մասնակցութիւններով:

Վերոյիշեալ եղելոյթները ի՞նչ կը նշանակեն եւ ի՞նչ կ'ապացուցանեն, եթէ ոչ հայութեան՝ դէպի իր երազները իրականացնելու ուղիներով ընթանալու եւ կառուցած մալու իր հաւատարմութեան եւ ապագայակերտութեան հիմունքներուն:

Պատահական չէին այս ուղղամիտ դիրքորոշումները, անզիջող կեցուածքները եւ ամբակուռ համոզումները, երբ ամբողջ 70 տարի այսօրուան Հայաստանը կառուցուեցաւ, որոնք անմիջական գալիքին համար պիտի դառնային «պատրաստի արհեստներով» լի պետականութեան հիմքեր ու խարխիւներ:

Կը մնար որ ժողովուրդը ընդունէր եւ արբեր այդ վայելքները, որոշ ատեն մը փորձելով յաղթահարել դժուարութիւնները եւ անձկութիւնները, այն յոյսով որ անկախութիւն ձեռք ձգելը կ'ենթարդէր նաեւ գոհողութիւններ, թեկուզ զրկանքներու եւ ժուժկալութիւններու գնով:

Դժբախտաբար, սակայն, սպասուած ու սպասելի պայմանները, ակնկալուած եւ ակնկալելի դրոյթները այնքան ալ ձեռնտու ու լիարժէք չէին կրնար դառնալ միանգամայն, այնքան ատեն որ Հայաստանը նորաթուխ պետութիւն մըն էր, որ հասակ պիտի առնէր իր բազմաճիւղ ու բազմատեսակ կառուցողական, ծնունդներով ու կազմութիւններով, իսկ ատոնք կը պահանջէին ժամանակ ու համբերութիւն, ծրագրեր ու տնտեսութիւն, անոնց միջոցով հետզհետէ անկախութիւնը թէ անելու համար:

Անկասկած, այդ բոլորը շուտով իրականացնելը այնքան ալ դիւրին ու հեզաստ պիտի ըլլար, մանաւանդ Հայաստանին նման նորանկախ պետութեան մը համար, որ նախ շրջափակուած էր թշնամի երկիրներէ (եթէ բացառենք Իրանը), ապա չունէր ծովային ելքեր, իսկ ատոնք անհրաժեշտ էին իր վերականգնումին ու վերակենդանացումին համար:

Տակաւին, Հայաստանին համար կը պակսէր դիւանագիտական աշխարհին հետ իր անզօրութիւնն եւ անփորձաւորութիւնը, տնտեսական կապերուն համարեա չզոյրութիւնը եւ ընդհանրապէս այն տուեալներն ու աղբիւրները, որոնք անկախութեան կու տային յուսատու լիցք եւ անմիջական յարաբերութիւններ:

Անկախութեան առաջին հիմնադիր-նախագահ պրն. Լեւոն Տէր Պետրոսեանի պաշտօնավարման շրջանը, իրօք, ՍՏՈՒԳԱՏԵՍԱԿԱՆ փորձագիտութիւն մըն էր, ուր օրակարգերն ու թղթածրարները այնքան կուտակելի եւ անլուծելի էին, իսկ զանոնք կարգաւորելը, դասաւորելն ու հիմնադրելը, կը կարօտէին խելամիտ, ուսեալ, լայնախոհ, բազմաշնորհ, յարգարժան մասնագետներու, կուռ ու հեղինակաւոր կառավարութիւն մը ունենալու եւ նոյնքան ազդեցիկ Ազգային ժողով մը:

Իսկ ատոնք գտնելն ու նշանակելը, պաշտօնակոչելը եւ ընտրելը, իրօք, նորահաս պետութեան մը համար մեծ պատասխանատուութիւն ու ձեռնհասութիւն կը պահանջէին, իսկ առաջին նախագահը այդ բոլորը տնօրինելու, համարդելու եւ զօրաշարժի ենթարկելու համար ունէր կարողութիւնը, բայց, մէկ կողմէն, համապատասխան ուժերն ու թեկնածուները կը բացակայէին, միւս կողմէն՝

ՃԵՊԱԶՐՈՅՅ ԸՆԿԵՐ ՍԵՊՈՒՀ ԳԱՎՓԱՔԵԱՆԻ ՀԵՏ

Շարունակուած էջ 1-էն

մեծամասնութիւն կազմելու հաւանականութիւնը սահմանափակ կը թուի:
Իմ կարծիքով՝ այս իրողութեան պատճառը կը կայանայ այն հանգամանքին մէջ, որ ընդդիմութեան քարոզարշաւը մեծապէս կեդրոնացած է երկու հիմնական կարգախօսներու շուրջ. առաջինը՝ ամէն գնով Նիկոլ Փաշինեանէն ազատիլը, եւ երկրորդը՝ Հայաստանը վերադարձնել Ռուսիոյ ազդեցութեան գօտի՝ թուլացնելով կամ խզելով Արեւմուտքի հետ յարաբերութիւնները:

Հարցը այն է, թէ այս մօտեցումները որքանո՞վ ընդունելի պիտի ըլլան ընտրողներուն համար: Ասոր կողքին՝ ընդդիմութեան ներկայացուցած ծրագրերը, իմ գնահատումով, չեն պարունակեր այնպիսի նորարարական կամ զգալի տարբերութիւններ, որոնք կրնան լայն հանրային հետաքրքրութիւն յառաջացնել: Տնտեսական, ընկերային, առողջապահական, կրթական եւ ռազմական ոլորտներուն վերաբերող բազմաթիւ առաջարկներ արդէն իսկ վերջին հինգ տարիներուն ընթացքին տարբեր ձեւերով ներառուած են գործող իշխանութիւններուն իրականացուցած բարեփոխումներու շրջանակին մէջ:

Հ.- Զեր կարծիքով, ընտրութիւններէն ետք կարելի պիտի ըլլայ՞ ձեւաորէն անէլի համախմբուած քաղաքական մթնոլորտ:

Պ.- Այս հարցին պարագային առաջին հերթին կը մնայ մաղթել, որ այդպէս ըլլայ: Կը մաղթենք, որ ընտրութիւններէն ետք քաղաքական կիրքերը հանդարտին եւ պարտուած ուժերը, շնորհաւորելով յաղողները, անցնին կառուցողական ընդդիմութեան դերին:

Ընդդիմութեան պարտականութիւնն ու իրաւունքը ոչ թէ մշտական առճակատում ստեղծելն է, այլ իշխանութեան եւ նորակազմ կառավարութեան գործունեութիւնը վերահսկելը, քննադատելը եւ անհրաժեշտ պարագաներով՝ այլընտրանքային լուծումներ առաջարկելը:

ՉԱՅՆԵՐ ԹԱԻՐԻԶԷՆ

(Շարունակուած էջ 1-էն)

«Արտագ»-ի նորագոյն թիւերը (Մարտ եւ Ապրիլ, անշատաբար) հասան իմ հասցէին ճիշդ ժամուն, առանց յապաղումի: Կարգապահ հրատարակութեան տիպար օրինակ մը՝ «Արտագ»-ը, որ պաշտօնաթերթն է Ատրպատականի Հայոց թեմին: Խմբագիրը թեմակալ առաջնորդն է՝ Գրիգոր արք. Զիֆթեանը:

Ուշադրութեամբ թղթատեցի երկու թիւերն ալ: Այո՛, պատերազմի ու անապահովութեան բերումով՝ համայնքային կեանքը դադրէր Է Ատրպատականի մէջ առժամաբար, բայց... կեանքը կը շարունակուի: Ճիշդ է որ եկեղեցիներն ու համայնքային հաստատութիւնները պահ մը փակեր են իրենց դռները, սակայն գո՛նէ «Արտագ»-ի էջերը լեցո՛ւն են: Շահեկան ու հետաքրքրական շատ բան կայ հոն: Եկէ՛ք ման գանք անոր էջերուն մէջ:

«Արտագ»-ի Մարտի թիւին առաջնորդող խմբագրականը կը կրէ «Մի գոյգ գծի՝ բացառիկ հերոսութիւն»-ը՝ խորագիրը:

«Գիծ» բառը գործածելի չէ մեր արեւմտահայերէնին մէջ, բայց առատօրէն գործածական է արեւելահայոց մօտ: Կը նշանակէ «խելթ, խելագար»: Ուշիմ ընթերցողներս անմիջապէս հասկցան անշուշտ, թէ «գոյգ գիծ» արտայայտութիւնը որո՞նց կ'ակնարկէ...: Եւ այդ գոյգ գիծերը ի՞նչ «հերոսութիւն»-ներ իրականացուցին իրենց պատերազմական սա վերջին արկածախնդրութեամբ...: Խմբագրականը նկատել կու տայ, որ «Համաշխարհային գոյգ գծերի գործի բերմամբ, այս տարի մեր համայնքը զրկուեց Մեծ պահոց Արեւագալի եւ Հսկումի արարողութիւններից, ինչպէս նաեւ խորախորհուրդ Կիրակիներից»:

Արդարեւ, Մարտին, գրեթէ դադրէր են եկեղեցական ամէն տեսակ արարողութիւններ Ատրպատականի տարածքին: Միայն Շաղկազարդն է որ նշուէր Է ի Թաւրիզ եւ Ուրմիա, Ս. Պատարագի մատուցմամբ: Ծրջանին մէջ գործող հայկական ամէնօրեայ երկու դպրոցները՝ Թաւրիզի Հայկազեան-Թամարեանն ու Ուրմիոյ «Մասիհա» վարժարանը դասաւանդութիւն կատարէր են արցանք:

Նկատի առնելով «գիծ»-երու օղային ռմբակոծութիւնները, միջազգայնօրէն ճանաչելի (ԵՈՒՆԵՍԿՕ-ի կողմէ որդեգրուած) կապոյտ ազդանշան-սաւաններ տեղադրուէր են թեմի տարածքին գտնուող հայկական պատմական վանքերու տանիքներուն վրայ, որպէսզի անոնք թիրախ չդառնան կոյր յարձակումներու...: Խելացի ու հնարամիտ արարք:

Միւս կողմէ, սակայն, 21 Մարտին, «Ս. Գրիգոր Լուսաւորչի մուտն ի վիրապէս» տօնին առիթով, առաջնորդ Գրիգոր սրբազան ուխտի այց մը կատարած է թեմին պատմական գլխաւոր կառոյցներէն նկատուող Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը (Զուլֆա), ուր գիշերած է քանի մը օր: Այս եղանակին, Նովորուզի տօնը հոն կը ներքաշէ եղեր օրական 1700-ի չափ այցելու, երկրին



Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը տարբեր շրջաններէն: Այստեղ, սրբազանին այցելած են պարսկական սահմանապահ գունդի ընդհանուր պատասխանատուն, Զուլֆա քաղաքի կուսակալը, այլ առիթով մըն ալ՝ շրջանի հնապահականութեան ընդհանուր տնօրէնը,

Սակայն պետք է ընդունիք, որ քաղաքական իրականութիւնը միշտ չէ, որ կը համապատասխանէ մեր մաղթանքներուն: Յոռետես չըլլալու համար միայն կրնամ ըսել, որ որոշ լարուածութիւններ, խառնակչական փորձեր կամ բողոքի շարժումներ բացառուած չեն: Յոյս ունիմ, որ նման երեւոյթներ, եթէ ի յայտ գան, իրենց սկզբնական փուլին մէջ կը չեզոքացուին, անկախ այն բանէն, թէ ովքեր պիտի ըլլան անոնց հեղինակները:

Հ.- Վերջապէս, ի՞նչ ակնկալիքներ ունիք ընտրական գործընթացին:

Պ.- Իմ համոզումով՝ վերջնական խօսքը միշտ ժողովուրդինն է: Յաղթանակը որոշողը եւ վերջին վճիռը կայացնողը ժողովուրդը պիտի ըլլայ: Ազատ, արդար եւ թափանցիկ ընտրութեան պայմաններու մէջ ժողովուրդը երբեք չի սխալիր, եւ ժողովուրդին կամքը յարգելը բոլոր քաղաքական ուժերուն պարտականութիւնն է: Այս սկզբունքը մեզի համար կարեւոր եղած է անցեալին եւ նոյնքան կարեւոր կը մնայ այսօր:

Մենք պարտաւոր ենք յարգելու հայրենաբնակ ժողովուրդին կատարած ընտրութիւնը, որովհետեւ անոնք են, որ ամէն օր կը կրեն երկրին բեռը, կը դիմագրաւեն անոր դժուարութիւնները, երբեմն ալ կը վայելեն անոր յաջողութիւններն ու ուրախութիւնները: Հետեւաբար, ժողովուրդին կամքը պետք է ընդունուի որպէս գերագոյն որոշում:

Եզրակացնելու համար ըսենք, որ իշխանական ուժերը ճիշդ է որ խտեպական չեն եւ մենք ունինք վերապահութիւններ, սակայն այս չափերու վերջնական ընդդիմութիւնը որեւէ լատենտութիւն չի ներշնչէր:

(Սիւնի, 3 Յունիս 2026)

որոնք պատրաստակամութիւն յայտնած են օժանդակելու թեմական կարիքներու: Միաժամանակ, տեղի ունեցած է վանքին պատկանող այգիի ծառերուն գարնանային յօտումն ու շրջակայ ածուներու ծաղկայարդարումը: Այս գործը կատարած են յատկապէս վանք ժամանած «Արագի ազատ գօտի»-ի քաղաքաշինութեան պարտիզականները, որոնք բեռնատար ինքնաշարժներով խորձ-խուրձ երկնաբան ծաղիկներ բերած են իրենց հետ ու զանոնք տնկած վանքին շրջակայքը: Ամբողջ վանքը գեղաբարդուած է...: Իսկ Գրիգոր սրբազան, վանական իր հնամենի սենեակին մէջ նստած, առիթի օգտագործելով գրի առած է շատ դիպուկ յուշեր՝ ի մասին նորոգ վայելանքալի Տաթև արք. Սարգիսեանի, որ հանդիսացեր է իր Պիքֆայի դպրեւանքեան տարիներու սիրեցեալ տեսուչը, 40-45 տարի առաջ...: Այդ սիրուն յօդուածը, լի՝ ինչ-ինչ անմոռանալի եւ յուզիչ իշխատակերտով, փռուած է «Արտագ»-ի ետքը էջերու երկայնքին:

Հիմա ալ կը թերթատեմ «Արտագ»-ի Ապրիլի թիւը: Պատերազմը մեղմացած ըլլալ կը թուի՝ իր տեղը զիջելով բանակցութեանը...: Այնուհանդերձ, այս տարի, Թաւրիզի եւ Ուրմիոյ մէջ Ազգ Շաբթուան արարողութիւններ չեն կատարուած, ապահովական նկատարումներով: Մատուցուած է միայն Ս. Յարութեան պատարագ (Ապրիլ 5): Չատուցուած առթիւ ժամերգութիւններ կատարուէր են Ուրմիոյ շրջանի Գեարդաբաղ եւ Ռահա հայաբնակ գիւղերու եկեղեցիներուն մէջ, գլխաւորութեամբ Մարտիրոս քիւն. Դուկասեանի, որ թեմին մէջ ծառայող միակ քահանան է ներկայիս:



Կացութիւնը յարաբերաբար բարելաւուած ըլլալով՝ Ատրպատականի թեմէն ներս կարելի եղած է աւանդական շուքով ոգեկոչել Հայոց ցեղասպանութեան նահատակներուն յիշատակը: 111-ամեակի առիթով, Ապրիլ 24-ին, Գրիգոր արք. Զիֆթեան պատարագած, քարոզած ու «Բարեխօսական կարգ» կատարած է Թաւրիզի Լիւիա հայաշատ թաղամասի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ: Նոյնանման ոգեկոչում մը կայացած է Ուրմիոյ հայոց Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մէջ ալ: Ազգային ու համայնքային մարմիններու կողմէ ծաղիկներ դրուած են եկեղեցիներու բակը գտնուող նահատակաց յուշարձաններուն առջեւ: Ապրիլ 26-ին, Թաւրիզի առաջնորդարանի «Հ. Ոսկանեան» հանդիսասրահին ներս կայացած է Մեծ եղեռնի կեդրոնական յուշահանդէսը, նախաձեռնութեամբ թեմական խորհուրդին: Յայտագրին մէջ լայն բաժին վերցուցած են ազգային վարժարանի աշակերտները՝ երգով, արտասանութեամբ ու նուագով: Նախքան իր եզրափակիչ խօսքը՝ Գրիգոր սրբազան գնահատանքի արժանացուցած է Թաւրիզի նորայարդար «Մելիք-Թանգեան» թանգարանին գիտական ու թեքնիք օժանդակութիւն ցուցաբերած անձերը: Ան շեշտած է. «Թշնամին թող մտածի թէ ոչնչացրել է մեր ազգի գոյութիւնը, երբ 750 տարուայ մեր թեմը վերաբացուած է իր դարաւոր գոյքերի թանգարանը Թաւրիզում...»:

Խանգարուած առօրեան ու համայնքային կեանքը քիչ-քիչ պիտի բարելաւուին Ատրպատականի մէջ...: Ո՛չ մէկ կասկած:

L. Շ.

ԿՐԹՈՒԹԵԱՆ «ԶՕՐԱԿՈՉ»՝ ՈՐՔԱՆՈՎ ԸԱՄԱՐԿՈՒԱԾ ԵՆՔ ԹՈՒԱՅԻՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Կրթության զորակոչի առջև կանգնած են մեր անաղակա ուսումնական համակարգերը վերածելու մարտահրավերի հրամայականով՝ թուային արհեստագիտություններու անհակազիջ զարգացող միջավայրին մէջ: Մենք կը կրթենք սերունդներ յարափոփոխ աշխարհի մը համար, ուր արհեստական բանականութեան (AI) անկաշկանդ յառաջընթացը արմատապէս կը վերածելու ուսումի, աշխատանքի եւ մարդկային փոխարարելիութիւններու կառուցումը: 21-րդ դարու երրորդ տասնամեակի սեմին, վերածելու մարտահրավերը կրթական ասպարէզին մէջ գործողներս կը հարկաւորէ նոր տեսլականով վերարժեւորելու թուային արհեստագիտութիւններու համարկումը կրթական կառոյցին մէջ:



Կրթութեան «ԶՕՐԱԿՈՉ»՝ որքանով համարկուած ենք թուային արհեստագիտութեան

Արդէ՞ք ուսումնական հաստատութիւնները՝ դպրոցներ եւ բարձրագոյն ուսման կառոյցներ, իրենց անաղակա ուսումնադաստիարակչական միօրինակ մօտեցումներով, կադրապարուած ծրագրերով ի վիճակի են ապահովելու յաջորդ սերունդներու կրթական եւ մասնագիտական պատրաստութիւնը: Համահունչ է՞ն լուսաւորութեան արդի կողմնորոշումներուն, կը յարմարի՞ն թուային արհեստագիտութիւններու համակարգի (այսօրեւե՛ր՝ ԹԱՅ) խելայեղ ընդլայնումին ու նուաճումներու հոլովոյթին ^[1]:

Արդէ՞ք ուսումնական հաստատութիւնները կրնան ուսանողները վերազինել ԹԱՅ-ի համապատասխան կարողութիւններով, որոնք անհրաժեշտ են ո՛չ միայն ներկայի, այլեւ ապագայ աշխատաշուկայի փոփոխուող պահանջներուն յարմարելու համար: Ինչպիսի՞ կրթական կառոյցի հեռանկար կարելի է կանխատեսել: Ինչպէ՞ս կարելի է վերարժեւորել ուսման կազմակերպումը՝ կրթութեան եւ մեքենայի միջեւ ձեւաւորուող փոխարարելիութիւնը:

Ուսումնական համակարգի հրամայականը՝ վերածելու

Յարդ ի՞նչ փոփոխուած է կրթական համակարգին մէջ, ինչո՞ւ անաղակա ուսումնական մօտեցումները չեն կրնար համընթաց զարգանալ ԹԱՅ-ի եւ ԱԲ անկառավարելի եւ խորապէս նորարարական զարգացումներուն հետ: Սա պարզապէս թուայնացում չէ, այլ մարդկային բանականութեան եւ մեքենայական համակարգերու միջեւ դերերու վերաբաշխում է: Մեքենաները կը ստանան տեղեկատուութեան, վերլուծութեան գործողութիւնները, մինչ մարդը կը պահէ քննադատական մտածողութեան, ստեղծագործութեան եւ բարոյական ճշգրիտ որոշումներ կայացնելու ճարտարապետի առանցքային իր դերը: Այսպիսով, կը ձեւաւորուի փոխլրացնող համագործակցութեան նոր նմուշ մը, ուր մարդն ու մեքենան չեն դիտուիր որպէս իրար փոխարինողներ, այլ՝ փոխարարածաբար լրացնող կառուցակարգեր: Այս համագործակցութիւնը ո՛չ միայն կ'ընդլայնէ կրթական եւ մասնագիտական գործունեութեան արդիւնաւէտութիւնը, այլեւ կը նպաստէ մարդկային կանխատեսելի սխալներու նուազեցման: Անաղակա ուսումնական համակարգերը կը գտնուին լուրջ մարտահրաւերի ճնշման տակ: Անոնք կառուցուած են դանդաղ փոփոխուող միջավայրի համար, մինչդէռ ԹԱՅ-ը ունի թռիչքաձեւ զարգացումի (exponential growth) բնոյթ:

Հասկնալի է, որ ուսումնական համակարգերու բովանդակութիւնը (syllabus, course sheet) կը թարմացուի երբեմն տարիներու ընթացքին, մինչդէռ տեղեկատուական եւ հաղորդակցական արհեստագիտութիւնները (IT), ԹԱՅ-ը կը զարգանան արագաշարժ ու ճկուն՝ ամիսներու վրայ չափուող շրջափուով (cycle):

Ծրագրերու բովանդակութեան եւ յիշուած արհեստագիտութիւններու զարգացման անհամաչափութիւնը ո՛չ թէ ուսումնական ծրագրերու թոյլ կառավարման հետեւանք է, այլ ուսումնական համակարգերու զարգացման դանդաղ կշռոյթն է: Եւ յիշուած արհեստագիտութիւններու նորարարութեան դիւրափոխութեան միջեւ:

Անաղակա ուսումնական կառոյցները մշտափոփոխ ուժընթացի (dynamics) հոսքի մէջ չեն, որուն պատճառով ուսանողի մը ձեռք բերած գիտելիքը կրնայ ինչպէս նոյնիսկ իր ուսման տարիներու ընթացքին, ինչ որ նոյնիսկ ուսանողը կը պարտաւորեցնէ հետեւելու յաւելեալ որակաւորման դասընթացներու, որպէսզի իր տեղը գտնէ աշխատաշուկային մէջ: Հետեւաբար, անաղակա ուսումնական կրթութեան բնոյթի վերածելու արդարեւ գերհրամայական անհրաժեշտութիւն է, որ անհաճոյ բայց յանդուգն հարցադրում մը կը յառաջանէ՝ «ինչո՞ւ սորվիլ», փոխանակ հարց տալու թէ «ինչպէ՞ս սորվիլ» եւ «ի՞նչ սորվիլ»:

Մարդաշարժ ուսուցիչներ՝ կրթութեան նոր յարացոյց

Պատմականօրէն, ուսուցիչը ընկալուած է որպէս գիտելիքներու հիմնական պահապան՝ «շարժական գրադարան»ի տիպարով, մինչ արդի կրթական միջավայրին մէջ անոր վերապահուած է անելի ընդլայնուած դերակատարութիւն մը, որ կը բնութագրուի որպէս ուղղորդող եւ երբեմն ուսումնական գործընթացի միջնորդ: Կրթութեան արժեքը այլեւս չի սահմանափակուիր տեղեկութեան փոխանցումով, այլ կը վերաբերի ստուգուած եւ օգտակար տեղեկութիւնը քննադատական ու վերլուծական մտածողութեամբ գնահատելու, զայն ուղղորդելու եւ նպատակային ու հեռանկա-

ՓՐՈՑ. ԱՐԱ ՍԱՅԵՂ (Լեհաստան)

Թային կերպով կիրառելու կարողութեան: Ուստի, կրթութեան առաւելութիւնը այլեւս միայն գիտելիքներ ունենալը չէ, այլ՝ նպատակադրուած եւ ծրագրուած հարցադրումներ ձեւակերպելու, արդիւնաւէտ կերպով օգտագործելու եւ ստուգուած տեղեկութիւնները ռազմավարական նպատակներու ծառայեցնելու հմտութիւններով:

Աստիճանաբար մարդաշարժութեան մեզ կը շրջապատեն օրէ օր, կրթական նոր միջավայրի մը ընթացք տալով: ԱԲ կառոյցով մարդաշարժութեան վստահ եւ լայնօրէն օգտագործուիլ ուսումնական կառուցման կառոյցներու մէջ, ներկայիս անոնք կարելի էր բաժնի մը ստանձնած են լեզուաբանութեան, տնտեսագիտութեան, բժշկութեան, մանկավարժութեան, իրաւագիտութեան եւ այլ ոլորտներուն մէջ, օգնելով բազմալեզու թարգմանութեան, վերլուծութեան, խորհրդատուութեան, քննութիւններու ստուգման, անհատական ուսուցման կազմակերպումի եւ այլն, այս գործընթացը արդէն կը կատարուի ու կը զարգանայ: Հասանական է, որ շատ մօտ ապագային «մարդաշարժ ուսուցիչները» բազմախառն ծառայելու որպէս բազմաշերտ աւելի համակարգուած հմտութիւններով, իբրեւ մասնագիտացած ակադեմիական օգնականներ, առանց ամբողջովին փոխարինելու մարդը:

Արհեստագիտութեան եւ կրթական շրջափուլերու անհամընթացութիւն

Պատկերացնենք ուսանող մը, որ իր ուսումը սկսած է 2018 թուականին՝ ԱԲ-ի (generative AI) լայն տարածումէն առաջ: Չորս տարուան ընթացքին ի յայտ եկան ԹԱՅ-ի եւ ծրագրերու նոր ձեւեր, որոնք կրցան իրագործել ծրագրաւորման, փորձարկման, փաստաթղթաւորման եւ սխալներու ուղղման գործառնություններ՝ յաճախ գերազանցելով միջին մակարդակի մասնագետներու կարողութիւնները, որուն հետեւանքով աշխատաշուկան արմատապէս փոխեց իր պահանջները: Միեւնոյն ժամանակ, այդ ուսանողի ուսումնական ծրագիրը գիտելիքի ենթարկուածութիւն մը կը յուշէր, ձեւաւորուած էր ԹԱՅ-ի արագ զարգացումներէն առաջ, հետեւաբար չէր կրնար համահունչ ընթանալ արհեստագիտական սրընթաց հոսքի դրոյթին:

Մենք արդէն ակնատես ենք «կրթական խզման» (educational gap) երեւոյթին, որ տեղ գտած է ուսումնական հաստատութեան եւ մասնագիտական գրեթէ բոլոր ոլորտներուն մէջ: Եւ սա հաստատուած է 2024-2025 թուականներու միջազգային հետազոտական զեկոյցներով: Հետեւաբար, խնդիր այն է, որ ուսումնական հաստատութիւնները կազմաւորուած էին աւելի դանդաղ եւ կանխատեսելի փոփոխութիւններու պայմաններուն յարմարելու նպատակով, մինչդէռ այսօր ԹԱՅ-ը սրընթաց զարգացում կ'ապրի եւ կը ձեւաւորէ ուսումնական բարդ համակարգեր, որոնք պայմաններուն մէջ անաղակա մօտեցումները այլեւս անկարող են լիարժեք կերպով բարարելու արդի ուսումնական կառուցակարգերի կարիքները:

ԹԱՅ-ի ժամանակակից զարգացումը խորապէս կը վերափոխէ կրթութեան եւ գիտելիքի անաղակա ըմբռումները: Կրթութեան առաքելութիւնը կը վերասահմանուի մարդու քննադատական մտածողութեան ինքնուրոյնութեամբ, իմացութեան կառուցման խորաթափանցելիութեամբ եւ իմաստաստեղծ կարողութեան համակարգուած զարգացումով, ԱԲ-ի դարաշրջանին մէջ անելի կենսական կը դառնայ մարդկային արժեքաբանական գիտակցութիւնն ու բնորոշող դատողութեան խորագիտակը:

Գիտելիք, թէ՛ կարողութիւն. կրթութեան երկբեւեռութիւնը

Կրթութեան ոլորտին մէջ OECD-ը կը հետազօտէ, թէ ինչպէս կարելի է կրթական համակարգերը համապատասխանեցնել ժամանակակից աշխարհի արագ փոփոխուող կարիքներուն ^[2]: OECD-ն իր 2025 թուականի զեկոյցին մէջ կը ներկայացնէ մտահոգիչ եզրակացութիւն մը՝ ընդգծելով, որ անաղակա կրթութեան մակարդակի աճը ինքնաբերաբար չի վերածուիր հիմնարար հմտութիւններու զարգացման: Այլ խօսքով, մեծ թիւով վկայականներ կը տրուին, սակայն սահմանափակ թիւերով շրջանաւարտները աշխատաշուկայ կը մտնեն, որոնք օժտուած են ԹԱՅ-ի գերազանց հմտութիւններով, կարողութիւններով:

Ժամանակակից կրթութիւնը կը գերազանցէ գիտելիքի վերարտադրութիւնը՝ առաջնահերթ համարելով ստեղծագործական, վերլուծական եւ քննադատական մտածողութիւնը, երեւակայութեան եւ նորարար մտայնացումներու, լուծումներու զարգացումը: Ապագայի կրթութիւնը կը դիտարկուի որպէս միջգիտակարգային (interdisciplinary) եւ բազմագիտակարգային (multidisciplinary) համագործակցութեան հարթակ, որ կը նպաստէ բեկումնային հետազօտութիւններու:

Ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի (WEF) 2025 թուականի զեկոյցին, գործատուներուն 81%-ը կը նախատեսէ մինչեւ 2030 թուական թեկնածուները գնահատել նախ եւ առաջ ըստ իրենց մասնագիտական փորձառութեան, ԹԱՅ-ի հմտութիւններուն, ատակութիւններուն եւ ո՛չ միայն վկայականներու հիման վրայ:

Թե՛ն կրթական համակարգերը հետամուտ են ու ճիշդ չեն խնայեր կրթութեան արդի արհեստագիտութիւններու հասանելիութիւնը ընդլայնելու, սակայն միշտ չէ, որ կը կարողանան այդ գիտելիքներու գործնական կիրառումը ապահովել աշխատաշուկայի համապատասխանութեամբ: Հետեւաբար, խնդիր քանակական չէ, այլ՝ որակական բնոյթով կը յատկանշուի, ի՞նչ եւ ինչպէ՞ս կը սորվեցնենք եւ ի՞նչ կը պահանջէ առկայ իրավիճակը:

Վերջաբանի փոխարէն՝ խոհի կոչ

Ժամանակակից ԹԱՅ-ի նուաճումներու շրջապատին մէջ կրթութիւնը կը գտնուի խորքային վերածելու արդարեւ շեմի

ՀԱՆԴԻՊԵՑԱՆ ԿԷՍ ԴԱՐ ԵՏՔ

ԶԱՐՄԻՆ ԿԱՆԱԶԵԱՆ ԱՍՄԻՆԵԱՆ

Սահակեան լիսի երկարամեայ վաստակաւոր տնօրէն Բեկիմի ժամկէտէն հետ առաջին հանդիպումս մինչեւ օրս կը յիշեմ:

Մեծ մօրս հետ ուրախ դպրոց գացի արձանագրուելու: Տնօրէնը քանի մը հարցում հարցնելէ ետք՝ զիս ծիլ դասարան ընդունեց:

Հաճոյն կը բնակէիք, թաղը փոքր էր բայց կար երեք հայկական դպրոցներ:

Ազգային Սահակ Մետրոպէան վարժարան, Հայ Աւետարանական Կերթմենեան վարժարան եւ իմ գացած դպրոց՝ Սահակեան լիսէն, ուր ես յաճախեցի մինչեւ 7-րդ դասարան, ապա Սահակեան Լ. Մկրտիչեան գոլէճէն շրջանաւարտ եղայ:

Ժամկէտանը մեզի կը դասաւանդէր կրօն եւ թուաբանութիւն, նաեւ ամէն առաւօտ մօտ երեսուն վայրկեան, իր գլխաւորութեամբ, առաջինէն 12-րդ դասարանի աշակերտներս շուտական մարզանք կը կատարէինք:

Ժամկէտանը լաւ մանկավարժ էր եւ իր բժախնդիր դաստիարակութեամբ դարձանք հայրենասէր հայեր:

Լիբանանահայութեան համար մեծ դերակատարութիւն ունեցած է Սահակեան լիսէն: Նոյն դպրոցէն շրջանաւարտ եղած էին հայրս ու հորաքոյրներս:



Հայրս յաճախ կ'արտայայտուէր, թէ դպրոցին մէջ դասընկերներով քոյր-եղբոր պէս մեծցած են: Բնաւ չէր մոռնար իր սիրելի դասընկերներէն Մովսէս Մարգարեանը, որ ներգաղթած էր Հայաստան: Կ'ըսէր. «Ուշիմ եւ խելացի էր, վստահ եմ՝ ուսման մէջ տեղ մը հասած պէտք է ըլլայ»:

Ափսոսանքով կ'արտայայտուէր, որ ինչ էր կրցած շարունակել իր ուսումը, բայց եղած էր վարպետ արհեստաւոր: Միշտ փառք կու տար Աստուծոյ, որ յարգանք կը վայելէր բոլորին կողմէ, իբրեւ լաւ մարդ:

Հայրս կապուած եղած էր իր թաղին (Հաճոյն) եւ Ս. Գեորգ եկեղեցիին:

Գիտակից ըլլալով, որ Սփիւռքի հայապահպանման կարելի մեկ օղակը եկեղեցին է, քանի մը տասնամեակներ ծառայած էր իբրեւ թաղական:

Երկար տարիներ աշխատելով իր փոքրիկ արհեստանոցին մէջ, որպէս հմուտ կօշկակար վարպետօրէն իշխած էր կարի մեքենային, մկրատին ու մուրճին վրայ, ապահոված էր ընտանիքին ապրուստը:

Հայրս շատ հանդարտ եւ համբերատար էր: Քիչ կը պատահէր, որ բարկանար, եթէ իր աշխատանքը անյաջող ընթանար:

Հօրս գործի վայրը յաճախ կը հանդիպէին բարեկամներ, ազգականներ եւ ընկերներ. պէտք է ըսել՝ քիչ մըն ալ հաւաքատեղի էր:

Վերջին տարիներուն իր արհեստանոցը սկսած էին այցելել երիտասարդ համալսարանականներ (նկարիչներ, արուեստագետներ): Անոնք իր հետ հանդիպումներ ու հարցազրոյցներ կը կազմակերպէին, զինք կը նկարէին իբրեւ ինչ սերունդի պատկանող արհեստաւոր, նոյնպէս արհեստանոցի չորս պատերը կը նկարէին, շատ հետաքրքրական գտնելով, ուր ան գետեղած էր զանազան նկարներ (Սայաթ Նովա, Կոմիտաս, Շարլ Ազնաւուր, Պարոյր Սեւակ, Դանիէլ Վարուժան, Միքայիլ Կորչեան, Ամենայն Հայոց կաթողիկոսներ, մարզական խումբեր, ազգականներ...):

Օր մը Հայաստանէն ժամանած տիկին մը գործով կը հանդիպի որս արհեստանոցը. երկար կը զրուցեն եւ հայրս կ'իմանայ, թէ այցելուն կ'ըլլայ իր մանկութեան դասընկերոջ՝ Մովսէս Մարգարեանի քոյրը: Ան բաւական տեղեկութիւններ կը քաշէ իր հեռաւոր ընկերոջ մասին:

Հօրս ուրախութեան չափ ու սահման չկար: Տարիներ տեք, ինչ որ տեղեկութիւններ հանգստացուցած էր իր միտքը եւ ուրախացուցած զինք:

«Հասընկերս՝ Մովսէսը դարձեր է դեղագործ», ուրախութեամբ գոչեց ան, երբ երեկոյեան գործէն տուն վերադարձաւ:

Իսկապէս յուզուեցայ, որովհետեւ որս արտայայտութեան մէջ տեսայ տարիներու կարօտ:

Մտածեցի թէ օր մը արդեօք երկու ընկեր գիրար տեսնելու բախտը պիտի ունենան:

Քանի մը տարի տեք, երբ ան գլուխը կախած կ'աշխատէր իր աշխատանոցին մէջ, յանկարծ իրեն կը բարեւէ անձ մը: Հայրս գլուխը բարձրացնելով երկար կը զննէ իստակիցը: Ան կը հարցնէ. «Ո՞ր կրնամ գտնել Կարապետ ճերմեանը»: Հայրս կը հարցնէ, թէ ի՞նչ կ'ուզէ Կարապետ ճերմեանէն: Ան կը պատասխանէ, թէ Սահակեան լիսի դասընկերն էր եւ կ'ուզէ զինք տեսնել:

Հայրս յանկարծ կը ճանչնայ, որ իր դասընկեր Մովսէսն է դիմացը կանգնողը եւ կ'ըսէ. «Ես ալ քու այն դասընկերդ եմ, որ նոյն ստարանին ստած միասին դաս կ'ընէիք, Կանաչեան Պողոսն եմ», ու երկուքը ամուր կը գիրկընդխառնուին ու մտովին կ'երթան դէպի անցեալ եւ կը յիշեն իրենց մանկութիւնը, դպրոցական քնքուն օրերն ու մանկական խաղերը:

Չէին հաւատար, թէ երազ էր կամ իրականութիւն պատահած: Անոնք յիսուն տարիէ աւելի գիրար չէին տեսած...եւ ան կը հանդիպէին:

Մարգարեան աթոռ մը վերցնելով կը ստի որս կողքը, երկար կը զրուցեն ու կը պատմեն իրենց կեանքի պատմութիւնը: Կ'ապրին հաճելի եւ գեղեցիկ վարկեաններ: Այդ անմոռանալի հանդիպումը հայրս միշտ կը յիշէր:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԵՏՔ ԻՆՉ ՊԱՏԿԵՐ ԿՐՆԱՅ ԶԵՒԱԻՈՐՈՒԻԼ

Ներքին անճարակ քաղաքական հոսանքները միշտ ալ իր դեմ հանդես կու գային խառնակցություններով, զրպարտութիւններով ու չարախօսութիւններով, հուսկ՝ Ղարաբաղեան հարցին թնճուկը, սահմանային անցքերն ու միջանցքները եւս հրատապութիւններ էին իրենց հրամայականներով, պահանջներով ու բանալիներով:

Ասոնք նախնական ու ճեպընթաց թուումներն էին, որոնք անկախութեան առաջին տարիներուն մեխերու նման խրուեցան ու խցուեցան, նորանկախ Հայաստանի «փափկաբեր»-ներուն, մինչեւ ներքին բորեւիները ու գարշատերերը, իրենց ամենօրեայ դաւերով ու նենգութիւններով, հասնեին նախագահական պաշտօններուն կամ պատրաստաշէն դիրքերու, ոչ միայն շահագործելով ու վարկաբեկելով պետականութեան արժանապատուութիւնը, այլեւ՝ ժողովուրդը թշուառացնելով եւ աղքատացնելով, արտագաղթի մղելով շատերը, ալ չխօսիմք թալաններուն, ոճիրներուն մասին, տեսակ մը մենատիրութեան ու բռնատիրութեան բերդի վերածելով հայրենիքը:

2018 թուականը, «դուխ»ով եւ «ուսապարկ»ով, «Նիկոլիզմ»ով եւ «թաւշեայ յեղափոխութեամբ» նոր դարաշրջան մը բանալու ողջունելի հեռանկար մը ստեղծեց, ժողովուրդը շունչ առաւ, որ «նախկին»ները կը դատուին, իրենց ապօրինի «աւար»ները կը վերադարձուին, «դղեակ»ները կը սեփականացուին, եւ այլն, եւ այլն, սակայն ատոնցմէ ոչ մէկը ցարդ չհրականացաւ, բացի կցկտուր փշրանքներէ, մինչ անոնց «հերոս»ները, «հանրային պարտեզ»ի գոհունակութեամբ կը դեգերին հոս ու հոն, կը թփուտան ու կը շողշողան կարծես թէ ամեն մէկը «անմտել պատառ» մըն է, իսկ իր շրջանը՝ «խաղաղութեան բեւեռ» մը:

Ներկայիս, երբ շուտով տեղի պիտի ունենան խորհրդարանական ընտրութիւններ, քաղաքական բոլոր կողմերը խտուներամ գոռոզամտութեամբ, անտեղի ցուցամուտութեամբ, անպատկառ ելոյթներով, անիմաստ կարգախօսային բացազանջութիւններով, ուռուցիկ հայրենասիրութիւններով ու խայտաբղետ տարատեսակ դիմակներով հանդես կու գան, պահ մը մտածել կու տան (թէ՞ չեն տար), որ այս ընտրութիւնները խորհրդարանական են, թէ՞ օրէնսդրական, ժողովրդավարական են, թէ՞ ինքնապաշտպանողական, հայրենասկան են, թէ՞ քաղաքական, ազգայնական են, թէ՞ փառատօնական:

Անշուշտ, ընտրական այս մրցակցական հեղին մէջ կան նաեւ այնպիսիներ, որոնք իրենց անկեղծ ու պարկեշտ համոզումներէն մեկնելով իրենց թեկնածութիւնները դրած են, ի հակադրութիւն այն բոլոր միւս խաժամուժային ամբոխներուն, երբ անկայտ է անոնց մեծ մասին ինչ-ինչ հաշիւներով մասնակցութիւնները:

Կ'անգիտանանք, թէ այս կոշտ մրցակցութեան թելերը ուրկէ՞ կը սկսին եւ ո՞ր կրնան վերջանալ, երբ յստակօրէն կ'երեւայ, թէ մրցակիցներուն կարելուր մէկ մասը զիրար շարդելով ու փշրելով... գերյագեցած է, հետաքրքրական է, ընդդէմ որո՞նք, թէեւ աղմկարարները կը յիշեն Ատրպեյճանը, Թուրքիան եւ... Ռուսաստանը (այս վերջնային պարագային, որմէ՞ վրեժ լուծելու, երբ... պատը իրենց դիմացն է):

Այս խլացուցիչ թոհուրոսին ու խառնիճաղանջին մէջ, եւ ընդհանրապէս ժողովին, կը տեսնենք երկա՛ր ամիսներէ իվեր հայաստանցիներու ամբոխային մեծամասնութիւն մը, ամենօրեայ դրութեամբ եւ յաճախակա՛նութեամբ Երեւանի հրապարակները, խաչմերուկները, պողոտաները, հանրաթաղերը, կեդրոնները, շրջանները, կամուրջները ողողած են իրենց քարոզարշաւներով, լոզունգներով, բարձրախօս-

Շարունակութեան էջ 2-էն

ներով, պաստառներով, ցուցանակներով, այս կամ այն կողմին զօրակցութիւն յայտնելով, ի՞նչ կ'ենթադրուի կամ կը հաստատուի. եթէ ոչ՝ Տե՛հ ՄԻՐ պատկերի մը մռայլութիւնը...:

Ի հարկէ, նման ընտրական մրցակցութիւններու պարագային այս բոլորը կը նկատուին բնական, այլեւ՝ անհրաժեշտ, բայց երբ հայաստանեան իրականութեան համապատկերին ընդմէջէն կը դիտուին, ուղղակի անհաւատալի է, աներեակայելի եւ անտրամաբանական, տեսելի հոս ու հոն ցրուած հաւաքներ, հանդիպումներ, շքերթներ, տողանցքներ, հանրատեղեր, որոնց մրցակիցները, ամէն ինչ ձգած-մոռցած, լծուած են արշաւներու, վազբերու, պրոչուտներու, իսկ որոշ տեղ ալ անկարգներ ենթարկելով... բերման:

Կարելուր հարց մը, արդե՞օք չի մտահոգուիր կամ հարցադրուիր, թէ ժողովուրդին այս զանգուածները աշխատանք չունին, եկամուտ չունին, ընտանիք չունին, որ ամիսներէ ի վեր փողոցներ կը չափչփեն, ի՞նչ է եղեր, այս կամ այն մէկը պիտի ընտրեն (կամ՝ չընտրեն), բայց պիտի վարձատրուին...:

Անշուշտ, մենք ո՛չ քննադատողի, ո՛չ քննադատականի դերին մէջ կը գտնուինք կամ կը յաւակնինք այդ դիտանկիւնով դիտելու հայրենական հրատապ հարցերէն ոմանք, որոնք, ինչպէս հայրենիքին, նաեւ մեր պարտականութիւնն է հետեւիլ անոնց եւ, ըստ այնմ, տեղին արձագանգել կամ դիտարկել զանոնք, առանց «գործնապէս» միջամուխ ըլլալու...:

Այն երեւոյթները, պատկերները կամ երիզները, որոնք մեր առջեւ պարզուեցան ու կը պարզուին անցնող տարիներուն, ոչ ոքի համար կրնան ըլլալ հանգստացուցիչ (ալ ո՛ր մնաց բերկրալի), մինչ ամէն ինչ դէպի լաւը ընթանալու նշաններ ո՞րն են, անելին՝ ո՞վ ըսաւ թէ ատոնք բաւարար են, գոհացուցիչ, երբ անոնք կը մասն հայրենական, սփիւռքեան են ազգային... գերմտահոգութիւններ:

Ամէն հայու համար, ինչպէս այսօրուան, նաեւ վաղուան հաշուոյն, խռովայոյզ հարցեր են ասոնք, որոնք, վերջերս, ոչ մէկ ձեռով իրենց բնականոն եւ օրինական կարգերուն վրայ կը գտնուին: Փաստերը՝ վկան:

Ինքնին հարց է, թէ վարդ, երբ խորհրդարանական ընտրութիւնները կը կայանան, անկախաբար անկէ, թէ ո՞վ կը շահի, կը կորսնցնէ, կամ կը յաղթանակէ, հայաստանեան ներքաղաքական ու ներխորհրդարանական վիճակը ի՞նչ պատկեր կրնայ ստանալ:

Հո՛ս է հարցերուն հիմնահարցը:

Այս գրութիւնը արդէն պատրաստուած էր, երբ ակա-նատես դարձայ քանի մը հպարտառիթ ազգաներշնչող պատուաբեր ու բացառիկ ձեռնարկութիւններու, որոնցմէ կարելի է յիշել միջազգային պարոյթի սքանչաւոր միջոցառումները՝ շուրջ հինգ հազար երիտասարդ-երիտասարդուհիներու առիթնուող մասնակցութեամբ, իսկ երկրորդ՝ Աշխատանքային օրուան առիթով, 1 Մայիսի փառատօնային փառաւոր շքերթը, երկուքն ալ, ծովածաւալ բազմութիւններու ներկայութեամբ, ինչ որ սիրտ կը հովազնէին, հոգիներ կը գերեին ու տրամադրութիւններ կը շեփոթէին, մինչ անդին ընդամադիր-բեկորներ, յաջորդ օրը, «ակցիա»ներ կը կազմակերպէին տասնեակ օտար դիւանագետներու առջեւ ի՞նչ ըսելու, ի՞նչ ցուցադրելու եւ ի՞նչ շահելու համար:

Ասոնց պատասխանները պէտք է փնտռել (եթէ կան) անոնց մօտ, որոնք վարակուած չեն հակալուրտութեան ախտերէ կամ կարճատեսութեան հիւանդկախութենէ...:

Շարունակութեան էջ 3-էն

հրամայականին առաջ: Մենք կը կրթենք զալիք շրջանի մը համար, որ տակաւին կը ձեւաւորուի, մասնաւորաբար ԱԲ-ի արագ զարգացումով, որ գլխավորաբար կը փոխէ ո՛չ միայն գիտելիքի բնոյթը, այլեւ կրթութեան իմաստը, դերն ու ուղղութիւնը:

Այս իրողութիւնը մեզ կը մղէ մտածելու, թէ ինչպէ՞ս կրթութիւնը կը շարունակէ իր առաքելութիւնը միջավայրի մը մէջ, ուր տեղեկութիւնները բոլորիս հասանելի են անկախաբար մէջ, իսկ փոփոխութիւնները տեղի կ'ունենան անկանխատեսելի բարեփոխումներով, որոնք կարելի է բաժնէլ՝

Ա- Զօրակցի առջեւ կանգնած է՝ կրթական համակարգը
- Հնարաւոր է, որ կրթական համակարգերը աստիճանաբար հեռանան գիտելիքի փոխանցման մօտեցումներէն եւ անելի մօտեան վերլուծութեան եւ գործնական կիրառութեան վրայ հիմնուած ձեւերու:

- Կարելի՞ է պատկերացնել անելի ճկուն եւ շարունակաբար թարմացող ուսումնական ծրագրեր, որոնք անելի արագ արձագանգեն ԹԱՀ-ի զարգացումներուն եւ աշխատաշուկայի փոփոխող պահանջներուն:

- Արդե՞օք նախագծային ուսուցումը եւ բազմագիտակարգային (multidisciplinary) մօտեցումները կարող են անելի կենսունակ ուղիներ դառնալ համակարգային մտածողութեան եւ բազմաբաղադրիչ խնդիրներու լուծման ելքեր գտնելու համար:

- Ի՞նչպէս կրթութիւնը կրնայ վերաբծեւորել իր հասունութիւնը աշխատաշուկայի հետ, որպէսզի վկայականը միայն գիտելիքի ցուցանիշ մը, ապացոյց եւ որոշիչ եզր չըլլայ, այլ նաեւ հմտութիւններու, մտային որակի, փորձառութեան, յարմարականութեան եւ գործելու կարողութեան արտայայտութիւն:

Բ- Զօրակցի առջեւ կանգնած է ուսուցիչը

- Ի՞նչպէս կրնայ ուսուցիչը պահպանել իր առանցքային դերը այնպիսի միջավայրի մը մէջ, ուր տեղեկատուութիւնը այլեւս միայն դասարանէն չի փոխանցուիր, այլ նաեւ հասանելի է բազմաթիւ ԹԱՀ-ի աղբիւրներէ:

- Կարելի՞ է ուսուցիչը դիտարկել ո՛չ միայն որպէս գիտելիք փոխանցող, այլ նաեւ որպէս ուղղորդող, քննադատական մտածողութիւնը զարգացնող եւ ստեղծագործական բազմաշերտ հմտութիւններով օժտուած դերակատար:

- Ի՞նչ նշանակութիւն կրնայ ունենալ ուսուցիչներու շարունակական վերապատրաստումը եւ թուային արհեստագիտութիւններու տիրապետումը կրթական գործընթացի որակը արդիականացնելու եւ կատարելագործելու:

- Խորապէս կառուցողական է ԹԱՀ-ի օգտագործել ո՛չ թէ որպէս պարզ կամ յաւելեալ ընտրութիւն, այլ՝ թեական, որպէս արժանահաւաստ կրթական գործընկեր: Հարկ է շեշտել, որ կրթական գործընթացին արդիանաւտութիւնը զգալիօրէն կախեալ է ուսուցիչին՝ ԹԱՀ-ի, ԱԲ-ի հասուն ու իրագրելի հմտութիւններէն, որպէս առանցքային ընտրութիւն՝ հասկնալու, կիրառելու, զատորոշելու, ընտրելու, ուղղորդելու եւ մանկավարժական նպատակներով արժեւորելու կարողութիւնէն: Այս իմաստով, ԹԱՀ-ի գրագիտութիւնը պէտք չէ դիտուի սոսկ որպէս արհեստագիտական լրացուցիչ հմտութիւն, այլ՝ որպէս մանկավարժական եւ հաղորդակցական փոխազդեցիկ միջավայր, որ կը վերածեաւորէ ուսուցման գործընթացը: Մասնաւոր, որ ուսանողութիւնը այսօր ո՛չ միայն ԱԲ պայմանաւորուած միջավայրի գործուն մասնակիցները կը բաղկանայ, այլեւ ԹԱՀ-ի մէջ հասակ առնող, արդի հաղորդակցութեան վարժ եւ գիտելիքի ընկալումը ձեւաւորող ունակ սերունդ մըն է:

Գ- Զօրակցի առջեւ կանգնած է ուսանողը

- Արդե՞օք պապային ուսանողը պիտի բաւարարուի միայն տեղեկութիւններ իմանալով, թէ՞ անելի կարելուր պիտի դառնան հասկնալու, հարցադրելու, քննական ու գիտափնտրութեամբ վերարտադրելու կուտակած իր գիտական հմտութիւնները:

- Ինչպիսի՞ արժեք պիտի ունենայ գիտելիքը այնպիսի միջավայրի մը մէջ, ուր տեղեկութիւնը հասանելի է վարկենապէս եւ ԱԲ-ը կարող է անկախաբար պատասխաններ տրամադրել, բայց միշտ ալ կարելի չէ ԱԲ-ի պատասխաններն ու լուծումները ընդունիլ որպէս բացարձակ ճշմարտութիւն:

- Հնարաւոր է, որ ապագայի ուսանողը վերածեաւորուի որպէս ստեղծագործող, ինքնուրոյն, արհեստագիտութիւններու յարմարական, հմտութիւններով զինուած ճարտար անհատ, քան որպէս միայն պատրաստ գիտելիքներու ամբարոյն ու սպառողը:

Մենք չենք կրթեր միայն այսօրուան աշխարհի համար, այլ՝ այն վաղուան, որ դեռ կը կերտուի մեր աչքերուն առջեւ՝ ԹԱՀ-ի եւ ԱԲ աննախադէպ եւ ուժգին թափով զարգացումներու նոր իրականութեամբ: Կը համոզուինք, որ ուսումնակրթական համակարգը ռազմավարական մտածողութեան հիմնարար դարբնոցն է, մտաւոր ձեւաւորման առաջնային տարածքն է, մեր ապագայ սերունդներուն հետ կամրջող ու խորամիտ մարդ տիպարը ձեւաւորող հիմնական հենքը: Այս իմաստով, ապագայի կրթութեան առանցքային խնդիրը այլեւս չի սահմանափակուիր «ի՞նչ» եւ «ի՞նչպէս» սորվեցնելու հարցադրումներով, այլ կ'առնուի անելի խորքային եւ քաղաքակրթական նշանակութիւն ունեցող հարցի՝ «ապագայատեսիլ ինչպիսի՞ մարդ ձեւաւորել»:

Մենք չենք կրթեր միայն այսօրուան աշխարհի համար, այլ՝ այն վաղուան, որ դեռ կը կերտուի մեր աչքերուն առջեւ՝ ԹԱՀ-ի եւ ԱԲ աննախադէպ եւ ուժգին թափով զարգացումներու նոր իրականութեամբ: Կը համոզուինք, որ ուսումնակրթական համակարգը ռազմավարական մտածողութեան հիմնարար դարբնոցն է, մտաւոր ձեւաւորման առաջնային տարածքն է, մեր ապագայ սերունդներուն հետ կամրջող ու խորամիտ մարդ տիպարը ձեւաւորող հիմնական հենքը: Այս իմաստով, ապագայի կրթութեան առանցքային խնդիրը այլեւս չի սահմանափակուիր «ի՞նչ» եւ «ի՞նչպէս» սորվեցնելու հարցադրումներով, այլ կ'առնուի անելի խորքային եւ քաղաքակրթական նշանակութիւն ունեցող հարցի՝ «ապագայատեսիլ ինչպիսի՞ մարդ ձեւաւորել»:

Մենք չենք կրթեր միայն այսօրուան աշխարհի համար, այլ՝ այն վաղուան, որ դեռ կը կերտուի մեր աչքերուն առջեւ՝ ԹԱՀ-ի եւ ԱԲ աննախադէպ եւ ուժգին թափով զարգացումներու նոր իրականութեամբ: Կը համոզուինք, որ ուսումնակրթական համակարգը ռազմավարական մտածողութեան հիմնարար դարբնոցն է, մտաւոր ձեւաւորման առաջնային տարածքն է, մեր ապագայ սերունդներուն հետ կամրջող ու խորամիտ մարդ տիպարը ձեւաւորող հիմնական հենքը: Այս իմաստով, ապագայի կրթութեան առանցքային խնդիրը այլեւս չի սահմանափակուիր «ի՞նչ» եւ «ի՞նչպէս» սորվեցնելու հարցադրումներով, այլ կ'առնուի անելի խորքային եւ քաղաքակրթական նշանակութիւն ունեցող հարցի՝ «ապագայատեսիլ ինչպիսի՞ մարդ ձեւաւորել»:

Մենք չենք կրթեր միայն այսօրուան աշխարհի համար, այլ՝ այն վաղուան, որ դեռ կը կերտուի մեր աչքերուն առջեւ՝ ԹԱՀ-ի եւ ԱԲ աննախադէպ եւ ուժգին թափով զարգացումներու նոր իրականութեամբ: Կը համոզուինք, որ ուսումնակրթական համակարգը ռազմավարական մտածողութեան հիմնարար դարբնոցն է, մտաւոր ձեւաւորման առաջնային տարածքն է, մեր ապագայ սերունդներուն հետ կամրջող ու խորամիտ մարդ տիպարը ձեւաւորող հիմնական հենքը: Այս իմաստով, ապագայի կրթութեան առանցքային խնդիրը այլեւս չի սահմանափակուիր «ի՞նչ» եւ «ի՞նչպէս» սորվեցնելու հարցադրումներով, այլ կ'առնուի անելի խորքային եւ քաղաքակրթական նշանակութիւն ունեցող հարցի՝ «ապագայատեսիլ ինչպիսի՞ մարդ ձեւաւորել»:

Մենք չենք կրթեր միայն այսօրուան աշխարհի համար, այլ՝ այն վաղուան, որ դեռ կը կերտուի մեր աչքերուն առջեւ՝ ԹԱՀ-ի եւ ԱԲ աննախադէպ եւ ուժգին թափով զարգացումներու նոր իրականութեամբ: Կը համոզուինք, որ ուսումնակրթական համակարգը ռազմավարական մտածողութեան հիմնարար դարբնոցն է, մտաւոր ձեւաւորման առաջնային տարածքն է, մեր ապագայ սերունդներուն հետ կամրջող ու խորամիտ մարդ տիպարը ձեւաւորող հիմնական հենքը: Այս իմաստով, ապագայի կրթութեան առանցքային խնդիրը այլեւս չի սահմանափակուիր «ի՞նչ» եւ «ի՞նչպէս» սորվեցնելու հարցադրումներով, այլ կ'առնուի անելի խորքային եւ քաղաքակրթական նշանակութիւն ունեցող հարցի՝ «ապագայատեսիլ ինչպիսի՞ մարդ ձեւաւորել»:

Մենք չենք կրթեր միայն այսօրուան աշխարհի համար, այլ՝ այն վաղուան, որ դեռ կը կերտուի մեր աչքերուն առջեւ՝ ԹԱՀ-ի եւ ԱԲ աննախադէպ եւ ուժգին թափով զարգացումներու նոր իրականութեամբ: Կը համոզուինք, որ ուսումնակրթական համակարգը ռազմավարական մտածողութեան հիմնարար դարբնոցն է, մտաւոր ձեւաւորման առաջնային տարածքն է, մեր ապագայ սերունդներուն հետ կամրջող ու խորամիտ մարդ տիպարը ձեւաւորող հիմնական հենքը: Այս իմաստով, ապագայի կրթութեան առանցքային խնդիրը այլեւս չի սահմանափակուիր «ի՞նչ» եւ «ի՞նչպէս» սորվեցնելու հարցադրումներով, այլ կ'առնուի անելի խորքային եւ քաղաքակրթական նշանակութիւն ունեցող հարցի՝ «ապագայատեսիլ ինչպիսի՞ մարդ ձեւաւորել»:

Մենք չենք կրթեր միայն այսօրուան աշխարհի համար, այլ՝ այն վաղուան, որ դեռ կը կերտուի մեր աչքերուն առջեւ՝ ԹԱՀ-ի եւ ԱԲ աննախադէպ եւ ուժգին թափով զարգացումներու նոր իրականութեամբ: Կը համոզուինք, որ ուսումնակրթական համակարգը ռազմավարական մտածողութեան հիմնարար դարբնոցն է, մտաւոր ձեւաւորման առաջնային տարածքն է, մեր ապագայ սերունդներուն հետ կամրջող ու խորամիտ մարդ տիպարը ձեւաւորող հիմնական հենքը: Այս իմաստով, ապագայի կրթութեան առանցքային խնդիրը այլեւս չի սահմանափակուիր «ի՞նչ» եւ «ի՞նչպէս» սորվեցնելու հարցադրումներով, այլ կ'առնուի անելի խորքային եւ քաղաքակրթական նշանակութիւն ունեցող հարցի՝ «ապագայատեսիլ ինչպիսի՞ մարդ ձեւաւորել»:

Մենք չենք կրթեր միայն այսօրուան աշխարհի համար, այլ՝ այն վաղուան, որ դեռ կը կերտուի մեր աչքերուն առջեւ՝ ԹԱՀ-ի եւ ԱԲ աննախադէպ եւ ուժգին թափով զարգացումներու նոր իրականութեամբ: Կը համոզուինք, որ ուսումնակրթական համակարգը ռազմավարական մտածողութեան հիմնարար դարբնոցն է, մտաւոր ձեւաւորման առաջնային տարածքն է, մեր ապագայ սերունդներուն հետ կամրջող ու խորամիտ մարդ տիպարը ձեւաւորող հիմնական հենքը: Այս իմաստով, ապագայի կրթութեան առանցքային խնդիրը այլեւս չի սահմանափակուիր «ի՞նչ» եւ «ի՞նչպէս» սորվեցնելու հարցադրումներով, այլ կ'առնուի անելի խորքային եւ քաղաքակրթական նշանակութիւն ունեցող հարցի՝ «ապագայատեսիլ ինչպիսի՞ մարդ ձեւաւորել»:

Մենք չենք կրթեր միայն այսօրուան աշխարհի համար, այլ՝ այն վաղուան, որ դեռ կը կերտուի մեր աչքերուն առջեւ՝ ԹԱՀ-ի եւ ԱԲ աննախադէպ եւ ուժգին թափով զարգացումներու նոր իրականութեամբ: Կը համոզուինք, որ ուսումնակրթական համակարգը ռազմավարական մտածողութեան հիմնարար դարբնոցն է, մտաւոր ձեւաւորման առաջնային տարածքն է, մեր ապագայ սերունդներուն հետ կամրջող ու խորամիտ մարդ տիպարը ձեւաւորող հիմնական հենքը: Այս իմաստով, ապագայի կրթութեան առանցքային խնդիրը այլեւս չի սահմանափակուիր «ի՞նչ» եւ «ի՞նչպէս» սորվեցնելու հարցադրումներով, այլ կ'առնուի անելի խորքային եւ քաղաքակրթական նշանակութիւն ունեցող հարցի՝ «ապագայատեսիլ ինչպիսի՞ մարդ ձեւաւորել»:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ...

Շարունակութեան էջ 1-էն

ԲԱՆԱԿՑԵԼՈՒ ԽՈՐՀԵՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՆԳՆՈՒԹԻՒՆ

Հանրապետութեան նախագահ Ժոզեֆ Աուն յայտնեց, որ «ուժը պատերազմելուն մէջ չէ, այլ յանուն երկրին բանակցելու խոհեմութեան ու խնդրակցութեան մէջ»: Հետեւելով գերագումներուն, կառավարութիւնը այսօր վարչապետարանին մէջ պիտի գումարէ երկրին քաղաքական, ապահովական եւ մարդասիրական թ